

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

### ՇՈՂԱԿԱԹ

Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

Գիրք Ա., գինն է 5 ըստթի

Վաղարշապատ 1913 թ.

Հայ գրի և տպագրութեան մեծ յօրելեանին նուրիբուած մի հայագիտական ժողովածու է լոյս տեսել Ա. էջմիածնում, որը պատահի է բերում այդ հաստատութեանը։ Այս ժողովածուն երկու մասից է բաղկացած՝ ա) 1.-170 բանում են գիտական լուրջ յօդուածներ, իսկ բ. մասում զետեղուած են հայ գրչութեան բաղմաթիւ օրինակներ 90 տախտակներով։ Իրենց գիտական յօդուածներով այս ժողովածուն մասնակցել են հայագիտութեան մէջ արդէն իսկ յայտնի ոյժերից Գալուստ Տ.-Մկրտչեան (Միաբան) Կարապետ եղ. Տ.-Մկրտչեան, Գարեգին Վարդապետ, Հրաչեայ Աճառեան, իսկ նորագոյն ոյժերից՝ Մեսրոպ Վրդ. Մաքուտեան և Ասլան Շահնազարեան։

Ժողովածուի ա. մասի բոլոր յօդուածները կամ լեզուարանական և կամ պատմա-բանասիրական բնոյթ են կրում։ Զուտ լեզուարանական են Մեսրոպ Վրդ. Մաքուտեանի երկու յօդուածները՝ «Դասական հայերէնի շուրջը», և «Հայերէն կրկնաւորները երեանի բարբառում»։ Այս կարգին կարելի է դասել մասմբ նաև միաբանի «Աղից ձախ հայ գրութիւն» յօդուածը։ «Դասական հայերէնի շուրջը» յօդուածը մի գրախօսական է պրօֆ. Մէյիի գերմաններէն լեզով կազմած քերականութեան։ Լեզուարանական հմտութեամբ օժտուած է, Մաքուտեանը այս գրախօսականի մէջ վեր է հանում, թէ գերմանացի հայագէտը իւր սուր գիտողութեան և մեթոսիկ ուսումնասիրութեան չնորհիւ հայ լեզուի թնչպիսի օրինակելի մի քերականութիւն է կազմել։ Հայ գրաբար լեզուի քերականութիւնները չունին սիստեմ, պարզորոշութիւն,

խճողուած են. այս կողմից բացառութիւն է կազմում միայն պր. Մալիսասեանի «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» փոքրիկ, բայց գեղեցիկ աշխատութիւնը. Այսպէս եթէ մնայ, բանն այնտեղ կարող է հասնել, որ հայ աշակերտը գրաբար լեզուն սովորելու համար դիմի գերսանացի գիտնականների կազմած հայերէն քերականութիւններին: Ներկայումս՝ քանի որ մեր միջնակարգ դպրոցներում գրաբարի ուսուցումը անհրաժեշտ է համարում խորհուրդ կտայինք հայ լեզուարաններին՝ օգտուելով եւրոպայի գիտնականների սուր դիտողութիւնից և մեթոտիկ աշխատութեան եղանակից՝ կազմել նոր լրացած հայերէն գրաբարի քերականութիւն: Հ. Մաքսուտեանի երկրորդ յօդուածը «Հայերէնի կրկնաւորները Երևանի բորբառում» հանդէս է բերում հայր սուրբի խոր հմտութիւնը հայերէնում, որով և իրաւունք կը համարէինք սպասել, որ Հ. Մաքսուտեանը՝ թողնելով իւր երկրորդական և կողմնակի գրադառունքները, որոնց արդինքը լեցնում է «Արարատ»ի էջերը, նուրիէր իրեն հայ լեզուի ուսումնասիրութեանը:

Մի հետաքրքիր հարց է շօշափում հայր Գալուստ միանը իւր «Անից ձախ հայ գրութիւն» յօդուածով: Հարցն այն է՝ թէ հայերը երբ և իցէ անից ձախ գրել են, ինչպէս ընդունուած է սեմական ժողովուրդների մէջ, թէ հայերը սկզբից յոյներին հետեւելով՝ ձախից աջ են գրել՝ ինչպէս ներկայումս է: Եթէ ճիշտ է՝ որ հայերին առաջին անգամ տառեր տուող ասորի Դանիէլն է և այդ տառերը ասորականին ազգակից էին, եթէ ճիշտ է, որ այդ տառերը գործադրուել են Վուամշապուհի հրամանով և ս. Մհարոպի ձեռքով մի քանի տարի շարունակ, եթէ ճիշտ է, որ ասորական տառերով գրող հայ գրադէտներ կային Հայաստանում: Վ դարում, իսկ ասորերէն, ինչպէս յայտնի է, աջին ձախ է գրում, եթէ այս բոլորը ճիշտ է և դրանում կասկած չկայ, ապա շատ հաւանական է, մինչև իսկ անհրաժեշտ է ընդունել, որ սկզբում հայերը մի առժամանակ նոյնիսկ Մհարոպեան տառերով աջից ձախ գրելու փորձը պէտք է արած լինեն: Դժբաղդաբար այս հաւանական ենթագրութիւնը հաստատող մի փաստ մինչև այժմ չէր գտնուած: Դիտնական միաբանին յաջողուել է՝ հետեւելով Այլիվալտ գերմանացու և Հ. Ալիշանի անորոշ ցուցմունքներին՝ Սեւանում գտնել մի խաչքար աջից ձախ հայերէն արձանագրութեամբ 1447 թուին գրուած: Բայց այս թուականը կասկածի առիթ է տուիս. միթէ աջից ձախ գրելու փորձեր եղել են նոյնիսկ XV դարում. և արդէօք այդ արձանագրութիւնը մի պատահականութիւն և կամ միայն մի գրչի խաղ չէ: Ահա

այս կասկածները փարատելու համար պէտք է որոնել նոր փաստեր:

Հ. Միաբանի «Հայ մատենագրութեան հնագոյն թուականներ» և Կարապետ եպ.ի «Ցովհան Մանդակոնի և Ցովհան Մայրագոմեցի» պատմաբանասիրական յօդուածներն ունին շատ լուրջ նշանակութիւն և, կարելի է ասել, յեղաշըզում են մեր V. VI և VII դարերի գրականութեան պատմութիւնը, որը մեզ սովորեցրել են Միիթարեանները, Միիթարեան հայրերը իրենց դարեւոր աշխատութեամբ մեր այդ դարերի գրականութեան պատմութեան մէջ երեք բան անսասանելի իրողութիւն էին համարել և սովորեցրել. ա) V դարը մեր դասական հայրէնի ոսկեղէնիկ լեզուի շրջանն է, օտարաբան լեզուն, հեղինակներն ու հեղինակութիւնները յետագայ VI և VII դարերի արդիւնքն են. բ) ս. Մահակի և Մեսրոպի երկրորդ կարգի աշակերտ կամ կըտսէր թարգմանիչ համարուածները բոլորն էլ V դարի վերջին ապրող հեղինակներ են և գ) V. VI և VII դարերում ապրող հայ նշանաւոր հեղինակներ, հայրապետները բոլորն էլ քաղքետոնիկ-կաթոլիկ են եղել և միայն երկրորդականներն են մերժել քաղքետոնական ժողովը Քաղքետոնի ժողովի դէմ եղած գրուածքները Միիթարեանները կամ մոռացութեան են տուել, կամ յետագայ աղաւաղում են համարել և կամ վերագրել են երկրորդական հեղինակներին. Այս երեք հիմնական, բայց հիմնովին սիալ տուեաներով Միիթարեանները աղաւաղել խճողել և մթագնել են մեր այդ երեք դարերի հայ գրականութեան զարգացման ընդհանուր պատկերը:

Միաբանն տասնհակ տարիների յամառ աշխատանքով կամցից է ճշտել հայ մատենագրութեան հնագոյն թուականները և այսօր հակառակ Միիթարեանների հասել է այս հաստատուն եղակացութեան. «Ոսկեղարեան զպրոցի ամենասորական գըրուածքը (Եւսէքոսի եկեղեցական պատմութիւնը), ուրեմն թարգմանուած է 416—420-ին, Միւս գպրոցի ամենայունաբան գրուածքը՝ Կուզը 480—483 թուի», Որ Եւսերէոսը V դարում էր թարգմանուած՝ այդ Միիթարեաններն ընդունում էին, որովհետև Խորենացին այդ մասին վկայել է, իսկ որ Կուզի քաղբնոտնի ժողովի դէմ գրած հականառութիւնն էլ V դարում է թարգմանուած, որ այդ դարում ապրող Մովսէս Քերթողահայրը եւ Ցովհան եպիսկոպոսապետ Մանդակոնի՝ օգտուելով այդ հականոութիւնից պայշարած լինեն քաղեթոնի ժողովի դէմ, ինչ որ հիմնովին ապացուցուած է միաբանի եւ Կարապետ եպ. վերյիշեալ երկու յօդածներով, հասկանալի է, որ անասելի սարսափ են յառաջ ըերում՝ այդ մտթերը Միիթարեան բա-

Նակում։ Եւ ինչպէս չսարսափել քանի որ Մխիթարեանների կադմած դարաւոր շէնքը փուլ է գալիս. քանի որ պարզւում է, որ V. դարը տուել է ամենաանճոռնի յունական գրուածներ, քանի որ Քերթողահօր և Յովհաննէս Մանդակունու նման յայտնի հեղինակներ և բարձրաստիճան հոգերականներ քաղքետոնի ժողովի դէմ ոգի ի բոլին պայգարել են։ Այս սարսափելի իրողութեան առաջ վեննայի բազմարդիւն Մխիթարեան Հ. Ակինեանը ուզում է առնել նրանով, որ Կուզի թարգմանութիւնը VI դարի կէսերն՝ նրանից օգտուող քերթողահօր VII դարի վերջերն է ձգում, իսկ Յովհան հայոց եպիսկոպոսապետին համարում է օտարազգի գրող «հայոց» բառը դուրս ձգելով, և այսպէս է անում արդի Մխիթարեաններից բազմարդիւն բանասէր Հ. Ակինեանը միայն նրա համար, որ Հմինի թէ Յովհան եպիսկոպոսապետ հայոց նոյնանայ Յովհան Մանդակունու հետ, որովհետեւ Յովհան Մանդակունին, այդ մեծ հայրապետը Մխիթարեանների և յատկապէս Հ. Մարգսեանի ուսումնասիրութեան համաձայն Քաղքետոնիկ է եղել։

Կարապետ եպ.՝ի ուսումնասիրութիւնը նուիրուած է հէնց այս հայրապետի կեանքին, դաւանարանական հայիացըններին և գրական գործերին։ Դիտնական հեղինակը՝ յենուելով «Ապացոյց» կոչուած դաւանարանական գրուածքի վրայ ցոյց է տալիս, որ Յովհան Մանդակունին մերժել է բաղդեռնի ժողովը։ Ապա Մանդակունու անունով եղած ճառերը էջմիածնի ձեռագիրների վրայ ուսումնասիրելով՝ զալիս է այն հաստատուն եղբակացութեան, որ Մանդակունու ճառերը, (փողի և վաշխի, թատրոնի դէմ և այլք) բոլորն էլ պէտք է Մայրագոմեցուն վերագրել, որի ճառերն ամփոփուած են «Խրատ վարուց» ընդհանուրը վերնագրի տակ։ Դարձեալ խիստ անյարմար դրութեան մէջ են ընկնում միխիթարեանները՝ մանաւանդ Հ. Մարգսեանը, որովհետեւ սրանը գերազրական աստիճանով գրուատել էին այդ ճառերի լեզուն և մտքերը, որոնք վերագրուում էին իմաստուն քաղքետոնիկ (Տ1c) Մանդակունի կաթողիկոսին, յանկարծ դուրս է գալիս որ այդ ճառերը Յովհան Մայրագոմեցուն, Եղր կաթուղիկոսի տեղապահին են, որը ծայրայեղ միաբնակ էր, որի ամբողջ կեանքը ու գրական գործունէութիւնը նուիրած է եղել քաղքետոնական դաւանանքը ջախջախելուն։ Արդեօք այս երեսոյթը իրատ կլինի Մխիթարեանների համար։ Նրանք կզգմնն, թէ գրական ուսումնասիրութեան մէջ անաշառութիւն պէտք է իշխէ և ոչ թէ դաւանարանական միտում և կամ առնասարակ որևէ տենդենց։

Իւր յօդուածի երկրորդ մասում սրբազան հեղինակը աշխատում է բնորոշել Մայրագոմեցու գրական դէմքը և զալիս է այն

եղրակացութեան, որ կոմիտաս և Եզր կաթողիկոսների տեղապահը մի կորովի անձնաւորութիւն էր և ժամանակի գրական խորագոյն դէմքը, որը թողել է երեք գրուածք «Խրատ վարուց», «Հաւատարմատ» կամ «Կնիք հաւատոյք» և «Նոյեմակի»: VII և մինչև իսկ VIII դարերում Յովհան Մայրագոմեցին վայելել է մեծ հեղինակութիւն, կոչուել է Յովհան իմաստասէր. յետագրում այս Յովհան իմաստասիրի շատ գրուածքները վերագրուել են Յովհան Օձնեցի իմաստասիրին:

Այս ժողովածուի մէջ մի շատ շահեկան յօդուած է զետեղել Գարեգին վարդապետը Նուիրուած Զագավանից ժողովին: Կարապետ եպիսկոպոսը և Գարեգին վարդապետը Ս. Էջմիածնի ձեռագրատան հանդիպել են «Սահմանք» կոչուած մի գրութեան, որն ամփոփում է իւր մէջ Զագավանքում գումարուած ժողովի կանոնները՝ մի քանի համառօտ պատմական տեղեկութիւններով ճոխացած: Յայտնի է, որ XIII դարում հայոց հայրապետութիւնը գտնուում էր Կիլիկիայում, ուրեմն հետացած Մեծ Հայաստանից, ուր իշխում էին թաթարները: 1243-ին Բարձրբերդցի Կոստանդին կաթողիկոսը մի ժողով է գումարում Սոսում եկեղեցու և ներքին բարձրագույն բարեկարգութեան մասին հոգալու: Այս ժողովի որոշումները՝ թուով 24՝ կաթողիկոսը յանձնում է Վարդան վարդապետին և ուղարկում է նրան Մեծ Հայաստան, որպէսզի այսոեղ ևս ընդունել և գործազրել տայ այդ կանոնները: և ահա 1270 թուին Արագայի խանութեան ժամանակ Զագավանքում մի ժողով է տեղի ունենում, ուր Սահ Կանոններին համապատասխանող որոշումներ են տրուում: Հ. Գարեգինը ժողովի հանգամանքները բացատրելուց յետոյ Սահմանքում յիշած պատմական անունների վրայ է կանկ առնում, ապա այդ Սահմանքի պատմական արժէքը բնուրոշում, և ի վերջոյ մէջ է բերում Սահմանքի յօդուածները: Մեր եկեղեցական, քաղաքական իրաւունքի պատմութեան համար շատ մեծ արժէք ունին եկեղեցական ժողովներում սահմանուած կանոնների հրատարակութիւնն ու ուսումնասիրութիւնը:

Հայոց անցեալի ուսումնասիրութեան համար մեծ նշանակութիւն ունի հայ զաղթականութիւնների պատմութիւնը: Յայտնի է, որ Սելճուկների և թաթարների արշաւանքների առաջ հայ նախարարական աները մասամբ դէպի արևմուտք և մասամբ դէպի արևելք գաղթեցին: Արևմուտք զաղթողները վերջ ի վերջոյ կենդրուացան կ. Պօլսում, իսկ արևելք զնացողները միացան վրաց թագաւորութեան և գրանցից շատերը այս պետութեան սիւները դարձան: Ա. Շահնազարեանն ուսումնասիրել է Զաքարեան տոհմի ժաման պատմութիւնը, այն տոհմի, որը XII

դարում վրաց պետութիւնը իւր զօրութեան գազաթնակէտին հասցրեց: Յօդուածագիրը իւր այս ուսումնասիրութեամբ գալիս է այն եղրակացութեան, որ Զաքարեան տոհմը ծագել է Հայաստանի հարաւում բնակիւող քրդերից, որոնք ժամանակի ընթացքում հայացել էին, ապա զաղթելով հաստատուել Զորագետում XI դարում: XII դարում այդ տոհմի երկու եղրայրները Զաքարէն և նվանէն մինչև այդ չտեսնուած դիրք են գրաւում, բայց յետագյում գանաժառանգական կոփւներին մասնակցելով կորցնում են իրենց նշանակութիւնը: Արևմուտքի զաղթականութեան, այն է՝ կ. Պօլսի հայութեան XVII դարու պատմութեան համար մեծ նշանակութիւն ունի այդ դարում ապրող Երեմիա Զելչապուտարեգութիւնը, որ մինչև այժմ անտիպ է մնացել Երուսալէմի միաբան հ. Մեսրոպ Նշանեանը այդ տարեգութիւնից հատուածներ է զետեղել այս ժողովածուի մէջ, որից իմանում ենք, որ այդ դարու կ. Պօլսի հայութեան բարեկրի և հոսանքների ուսումնասիրութեան տեսակէտից շատ մեծ արժէք ունի այդ տարեգութիւնը, և միայն ցաւել կարող ենք, որ դրա հրատարակութիւնը այդքան ուշանում է:

Եթէ յիշենք Աճառեանի յօդուածը Աստուածաշնչի նորաբերթագմանութեան մասին, ուր ապացուցուած է, որ Կուզել բնաւաշքի առաջ չի ունեցել հայերէն Աստուածաշնչի որևէ թարգմանութիւն և Խաչիկ վարդապետի Սաղմոսավանքի ձեռագրաց ցուցակը, այդպիսով մենք սպառած կլինենք այս ժողովածուի Ա. մասի մեր գրախօսութիւնը:

Բ. մասը բռնում են, ինչպէս վերել յիշեցինք, հայ գրչութեան արտեստի 90 նմոյշները, 90 տախտակների վրայ, որը պատրաստել և դասաւորել է մեծ ժրաշանութեամբ Գարեգին վարդապետը: Եւ ինչ աւելի գեղեցիկ միտք, քան հայ գրերի 1500 ամեակի առթիւ տալ այդ գրերի զանազան դարերում ստացած ձեերի և զարգացման շօշափելի պատկերը: Ուսումնասէր վարդապետը իւր կազմած հայ հնագրութեան բարտէզին կցել է մի ընդարձակ բացատրական յօդուած, ուր նկարագրուած է գրչութեան օրինակների ժամանակը, որտեղից վերցուած լինելը ևլն, ապագային թողնելով այս առթիւ արած իւր արդէն պատրաստի ուսումնասիրութեան հրատարակութիւնը: Մեր ձեռքն է հասել հայր Գարեգնի այս աշխատութիւնը առանձին զրքով բարեփոխած ու ճոխացրած: Հեղինակն աշխատել է 150 օրինակներով տալ զարդափար թէ հայ զրչութեան արուեստի և թէ զրչութեան առանձին զպրոցների մասին: Միայն ափսած, որ օրինակների գասաւորութեան մէջ ոչ ժամանակադրական, ոչ արուեստի աս-

տիճանական զարդացման և հչ ուեէ գրչութեան դպրոցի արդիւնքների կարգն է պահպանուած, այլ խառն ի խուռն և պատահական, այնպէս որ մի հայեացքով աստիճանական զարգացումը չի կարելի ըմբռնել, այլ պիտի ղեկավարուել բացատրական յօդուածով կամ ժամանակագրական ցանկով: Եթէ ժամանակապրական կարգով դասաւորուելու լինէին այդ օրինակները, այն ժամանակ ամեն մի երեսի վրայ միայն մի օրինակ պիտի տեղաւորուէր, բայց այդ գէպօրում ծախք շատ կլինէր. և երեսի հէնց այդ պատճառով էլ օրինակների դասաւորումը եղել է պատահական: Բայց չնայած դրան այս աշխատութեան արժէքը շատ մեծ է \*):

Դառնալով այս ժողովածուի ամբողջութեանը՝ պիտի ասենք, որ էջմիածինը վերջին տասնեակ տարիներում այսպիսի գեղեցիկ զործի չէր ձեռնարկել: Մենք յոյ ունենք, որ նորին Սրբութիւն Գէորգ Ե-ի օրով սկսուած այս գործը մի եղակի երեսոյթ չի լինի, որ Վեհափառ Հայրապետը միջոց չի խնայի տարին՝ առնաւազը մի կամ երկու այսպիսի գիտական ժողովածու հրատարակելու. մանաւանդ որ կան վստանելի ապացոյցներ, որ էջմիածնի գիտնական միաբանների մօտ հաւաքուած են ուսումնասիրութիւններ, որոնք մեկնասի են սպասում: Իսկ էջմիածինը յանուն Ս. Սահակի և Մեսրոպի նուիրական յիշատակի պէտք է որ մեկնաս հանդիսանայ իւր գիտնական միաբաններին:

Դր. Մ. Խոստիկեան

---

„ԺՅՈՂՈ ՏԱԺԱԿՏՅՈՂՈ“ I, II. „ՏԱԺԱԿՏՅՈՂՈ ՏՈԺՅՈՂՈ“ II, III.

Վրաց Պատմա-Ազգագրական Ընկերութիւնը, որ սկսել է իր գործունէութիւնը 1907 թուականից, արժանի է մեծ ուշազութեան և նոյնիսկ նախանձի հայերի կողմից: Այդ ընկերութեանը վիճակուել է այնպիսի մի բազդ, որին, ի ցաւ սրտի, պէտք է ասել, գեռես չի արժանացել Հայոց Ազգագրական Ընկերութիւնը, որ նրանից վազ է կազմակերպուել և նրանից աւելի բեղմնաւոր է եղել իւր գիտական արդիւնքներով. այն է՝ Սարաջեը նուիրել է 150,000 ր. թանգարանի շէնք կառուցանելու, վրաց

\*.) Գարեգին վարդապետի վերջին աշխատութիւնները իւստ արժէքաւոր են, և մենք կցանկայինք, որ նա բացառապէս իւր այդ սիրած գործին նուիրուէր, և յոյս ենք յայտնում, որ այդ կարեսը ուսումնասիրութիւնների հրատարակութիւնը շատ չի ուշանայ:

ազնուականութիւնը տարեկան 5000 ր. է յատկացրել ազգային հնութիւններին նուիրուած ուսումնասիրութեան վեհ գործին, 3000 ը. էլ անցեալ տարի տուեց ֆրեսկների ընդօրինակութեան համար. իշխան Թումանովը նուիրել է մի հողաբաժին՝ 29,000 ր. արժողութեամբ: Բացի դրանից, յայտնի վրացագէտներ (օրինակ՝ Ե. Թաղայշվիլի, Մ. Զանաշվիլի, մագիստրոս աւ. բան. Կ. Կէկէլիձէ, Դ. Կարինաշվիլի, Մ. Գորգաձէ, Ա. Սարաչև, Յ. Արուլաձէ և այլն), փոխանակ անշատուելու, նոր նոր ընկերութիւններ հիմնելու, միացած գործում են, ուստի և միանգամայն հասկանալի է, թէ ինչու այդ ընկերութիւնը իր՝ առաջժմ  $\frac{1}{2}$  տարուայ գոյութեան ընթացքում կարողացաւ կատարել ահագին կուլտուրական աշխատանք, այս է՝ հիմնել բաւականին հարուստ հնագիտական-ազգագրական թանգարան («Ղրաց Թանգարան»), բանալ բաւականին օրինաւոր գրադարան (միայն հին ձեռագրերի թիւը հազարից անց է), կատարել մի շաբթ գիտական արշաւանքներ Վրաստանի զանազան կողմերում և, բացի սրանից, ձեռնարկել 2 սէրիաների հրատարակութեան:

Այս անգամ մենք ուզում ենք խօսել միայն ընկերութեան հրատարակչական գործունչութեան մասին:

Ընկերութիւնը, ինչպէս ասացինք, ձեռնարկել է 2 սէրիաների հրատարակութեան: Մէկ սէրիան է «Եցեղո Տայառուցուած»—«Վաղեմի Վրաստան», միւսը՝ «Տայառուցուած»—«Վրաստանի Հնութիւններ»: Առաջին սէրիայում տեղ են գտնում, առհասարակ, զանազան հետազոտութիւններ և զեկուցումներ, հետեալ բովանդակութեամբ՝ ա. մահախօսականներ (հանգուցեալ վրաց գործիչների և գրագէտների մասին), բ. զեկուցումներ և հետազոտութիւններ, գ. վրաց պատմութեան և գրականութեան վերաբերեալ նիւթեր, դ. ազգագրական նիւթեր, ե. ժողովրդական երգեր, և այլն իսկ երկրորդ սէրիայում տեղ են գտնում, ընդհանրապէս, հում նիւթեր, օրինակ վաւերագրեր (գլխաւորապէս՝ «Գուշարաններ»): Իւրաքանչիւր հատորը բաղկացած է մօտ 600 (in 8<sup>0</sup>) երեսից, լոյս է տեսնում պարբերաբար: Առայժմ լոյս են տեսել «Վաղեմի Վրաստան»-ի I և II հատորները, և «Վրաստանի Հնութիւններ»-ի II և III հատորները: բացի դրանից, իբրև յաւելուած «Վրաստանի Հնութիւններ»-ի II հատորին, հրատարակուած է Պալեօգրաֆիական ալրօմ, մեծագիր in folio:

«Վաղեմի Վրաստան»: Այս սէրիայի I հատորը լոյս է տեսել 1909 թ. և բաղկացած է XXXII+499+II եր. այդուեղ զետեղուած են Ամբրոսիոս վարդապետի, Դ. Կարինաշվիլու, Մ. Գորգաձէի, Յ. Արուլաձէի, և. Թաղայշվիլու, Մ. Զանաշվիլու, Ի.

Կարգարետելիի և ուրիշների յօդուածները: II հատորը լոյս է տեսել 1913 թ. և բաղկացած է XXX+740 եր. այդտեղ զետեղուած են Ա. Գորգածէի, Պ. Կարբելաշվիլի քահ., Կիրիոն Եպիսկոպոսի, Ե. Թաղայշվիլու, Մ. Զանաշվիլու, բանաստեղծ Վաժա-Փշաւելայի և ուրիշների յօդուածները:

«Վ. բաստանի Հնուրիւններ»: Այս սէրիայի I հատորը հրատարակել է անձամբ Ե. Թաղայշվիլին, սակաւաթիւ օրինակներով, 1899 թ. բաղկացած է VI+529 եր. այդտեղ զետեղուած են XIV—XIX դարերին վերաբերող զանազան վաւերագրեր: Այս հատորն ընկերութիւնը մտադիր է մօտիկ ապագայում նորից լոյս ընծայել իրեն իր՝ ընկերութեան հրատարակութիւն: II հատորը լոյս է տեսել 1909 թ. և բաղկացած է VIII+600 եր. այդտեղ զետեղուած են XI—XVIII դարերին պատկանող զանազան վաւերագրեր: III հատորը լոյս է տեսել 1910 թ. և բաղկացած է XXXII+612 եր. և պարունակում է XV—XIX դարերին պատկանող զանազան վաւերագրեր:

Լ. Մելիքսեբ-Բեկեան

«Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа», вып. 43 (1913 г.).

Կովկասեան ուսումնարանական շրջանի կառավարչութեան միջոցներով հրատարակուող գիտական ժողովածուի այս հատորը պարունակում է 4 աշխատութիւն, որոնց թւում երկուսը աշխարհագրական-ազգագրական ու մի-մի էլ հնագիտական և լեզուարանական:

Առաջին տեղն է բռնում Archangelo Lamberti-ի «Relatione della Colchide hoggi detta Mengrelia» (այսինքն՝ «Նկարագրութիւն Կոլխիդայի», որ այժմ Մինդրէլիա յորջորջի) իտալիերէն աշխատութեան ուսուերէն թարգմանութիւնը, որ կատարել է Կ. Հանը հանդերձ իրեն՝ Հանի և Զանաշվիլու, Կորայիայի, Լոպատինսկու, Ճղոնիայի ծանօթութիւններով. նոյն աշխատութիւնը առելի առաջ թարգմանուել է վրացերէն՝ Ա. Ճղոնիայի ձեռքով: Աշխատութեան գլխաւոր արժեքը կայանում է նրանում, որ նա տալիս է Վրաստանի մի անկիւնի Մինդրէլիայի (Օդիշիի) նկարագրութիւնը, կատարուած XVII դարում: Հեղինակը՝ դոմինիսիկան պատէր Archangelo Lamberti-ն մօտ 18 տարի, այսինքն 1635—1653 թուականներին, բնակուել է Մինդրէլիայում իրեն իտալական (լատինական) միսիոնէր, և այդ երկրի մէջ լսածն ու

տեսածն ամփոփ կերպով գրի է առել և տպագրել նէապօլում  
1654 թուին:

Երկրորդ տեղը բռնում է Վ. Սըսոնի՝ Դարձայի նկարա-  
գրութիւնը աշխարհագրական, կենցաղավարական ու պատմական  
տեսակէտից:

Ցետոյ գտնւում է անխոնջ վրացագէտ Ե. Թաղայշվիլու աշ-  
խատութիւնը՝ «Հնագիտական էկսկուրսիաներ, հետախուզութիւն-  
ներ և նկատողութիւններ», որը, միաժամանակ, մանում է և  
Կայսերական Մոսկվայի Հնագիտական Ընկերութեան կովկասեան  
Բաժանմունքի «ԱզԵՇՏԻԱ» հրատարակութեան III (1913 թուա-  
կանին լոյս տեսած) հատորը Աշխատութիւնը բաղկացած է զա-  
նազան յօդուածներից. ի միջի այլոց, աչքի է ընկնում բորչա-  
լուրի գաւասի թրիալէթի շրջանի վրացական հնութիւնների նկա-  
րագրութիւնը. Այդ նկարագրութեան հիման վրայ հեղինակը գա-  
լիս է մի հետաքրքիր եղանակացութեան, այն է՝ թրիալէթի շրջա-  
նում շինարարութեան ոսկէ դար եղէլ է XI և մասամբ XII դա-  
րը, երբ այդ շրջանում էրիսթաւ էին Բատ և Լիպարիտ Օրբե-  
լիանները.

Վերջապէս, չորրորդ աշխատութիւնը դա յայտնի լեզուա-  
գէտ Ա. Դիրքի Դաղստանի լեզուներից մէկի՝ Ցախուր լեզուի  
ուսումնասիրութեան արդիւնքն է «Ցախուր լեզու» վերնագրով:  
Լ. Մելիքսեթ-Բէկինան

## Г. М. Тумановъ. Характеристики и Воспоминания. Кн. первая. II-ое изд. Т. 1912 г.

Գրքոյկիս հեղինակը անծանօթ անձնաւորութիւն չէ կովկա-  
սում, թէ հասարակական և թէ գրական ասպարէզների վերայ.  
Առուսաց լրագրների և ամսագրների վաղեմի աշխատակից, նախ-  
կին խմբագիր „ԽօՏ. Օօօթքիութիւններից մէկը—նա տասնեակ տա-  
րիների ընթացքում խօսել և գրել է նոյն ուղղութեամբ, գնացել  
է նոյն ազնւութեան ճանապարհով: Այդպիսի առկունութեան և  
քաղաքացիական ուղղամտութեան առաջ չի կարելի չխոնար-  
հուել: Ինըը հայ, սնուած և մեծացած վրաց շրջաններում և նը-  
րանց աշխարհայեցողութեան ազդեցութեան տակ—նա իր հա-  
մոզմունքներով եղել է միշտ ուսս ազատամիտ, 60-ական թուա-  
կանների շկոլայի աշակերտ, կողմանկից լաւազոյն ուսւ ինտէլի-  
գէնցիայի կուսակցութեան՝ «կաղէտաների»:

Իր այս գրքոյի մէջն էլ նա նոյնն է մնում՝ յառաջադիմութեան ջերմ պաշտպան, բարեացակամ կովկասեան բոլոր ազգերի ինտելեգէնցիայի ու նրա մտաւոր գործունէութեան։ Մի շաբթյշտութիւնների և դիմագծերի մէջ նա մեղ ծանօթացնում է վրացի, հայ և, մասամբ, ոուս զրական և հասարակական գործիչների հետ նաև նա խօսում է և բազմակողմանի տաղանդի տէր իշխ։ Դ. Երիստովի մասին և ժողովրդի բարեկամ վիպասան Կազբէկի մասին։ Գր. Արծրունուց յիշոյ գալիս է քաղաքագլուխ Մատինեանը, ապա յիշողութիւններ է նուիրում Զանշեանին, Գոլցեսին և համառում է մինչև մեր օրերը—նուիրելով ջերմ տողեր Աղ. Բալանթարին։ Երեսնի մօտ յօդուածներ կարդացվում են առանց ձանձրոյթի, ամենայնհետաքրքրութեամբ և, իհարկէ, ոչ անօգուտ, մանաւանդ նրանց համար, որոնք մաքուր աղքիւրից կկամենային տեղեկութիւններ ստանալ կովկասի մտաւոր կեանքի և հոսանքների մասին։

Մին. Թեր.

